~~60~~
58

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

_____ Վ.Լ.Հարությունյան
19 հունիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Էսթեր Աշոտի Հակոբյանի «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլում կայուն տնտեսական աճ ապահովելու համար առանցքային նշանակություն ունի ստվերային տնտեսության ծավալների կրճատումը:

Տնտեսական հարաբերությունները պատկանում են առավել բազմաբնույթ և բարդ կատեգորիայի, որի հիմքում հասարակության մեջ արտադրության բոլոր փուլերի փոխհարաբերությունն է՝ հոգևոր և նյութական արժեքների ստեղծումը:

Ստվերային տնտեսությունը տնտեսական հարաբերությունների ածանցյալն է: Ամբողջ աշխարհում, գործունեության տարբեր բնագավառներում, ստվերային տնտեսության ծավալները և կրճատման ուղիները ուսումնասիրման առարկա են և գտնվում են գիտական հետազոտությունների շրջանակներում:

Հիմնական վիճահարույց հարցերի շարքում ներառված է սահմանման, բովանդակության, ինչպես նաև ստվերային հարաբերությունների դրսևորման ձևերի և ուղղակիորեն այդ հարաբերությունների վերափոխման առանձնահատկություններին վերաբերող հարցը:

Կա հաստատված անհերքելի կարծիք, որ ստվերային տնտեսության բարձր ցուցանիշները վտանգ են ներկայացնում պետության զարգացման, առաջընթացի համար: Շատ առումներով, դրա չափը որոշվում է պետական կառավարման այն մոդելի կողմից, որը զարգացել է տվյալ երկրում: Ստվերային տնտեսության զարգացման մակարդակը կախված է ինչպես տվյալ երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական շահերի առանձնահատկություններից, այնպես էլ իրավական և օրենսդրական դաշտի կարգավորումներից:

Այսօր ստվերային տնտեսությունը և դրա մասշտաբի գնահատումը հրատապ խնդիր են Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման համար: Անցումային շրջանի առանձնահատկությունների պատճառով սոցիալական, քաղաքական և տնտեսական խնդիրները, ինչպես նաև մեծ թվով արտաքին գործոնները դժվարություններ են առաջացրել Հայաստանում ստվերային գործունեության իրական ծավալները որոշելու համար: Վերը նշվածի առումով Էսթեր Աշոտի Հակոբյանի ատենախոսության թեմայի՝ «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» ընտրությունը խիստ արդիական է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ատենախոսության հետազոտության նպատակն է բացահայտել երկրի ստվերային երևույթների բացասական ազդեցությունները երկրի տնտեսության զարգացման գործընթացում, ինչպես նաև մշակել ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Այդ նպատակի իրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ վերլուծել «ստվերային տնտեսություն» կատեգորիային առկա տեսական մոտեցումները եւ իրականացնել դրանց համեմատական վերլուծությունը,
- ✓ համակարգել ստվերային տնտեսության ծավալների որակական եւ քանակական գնահատման հիմնական մեթոդաբանական սկզբունքները,

- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրա հետ կապված միջազգային փորձը,
- ✓ բացահայտել ստվերային տնտեսության բնույթը, տեսակները եւ ձեւերը,
- ✓ գնահատել ստվերային տնտեսության հետեւանքները սոցիալ-տնտեսական գործընթացներում,
- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առանձնահատկությունները եւ դրանց դրսևորումները ՀՀ-ում,
- ✓ վերլուծել ստվերային տնտեսության պատճառները ՀՀ-ում,
- ✓ սահմանել ստվերային տնտեսության դերը եւ նշանակությունը ՀՀ-ում,
- ✓ զարգացնել ստվերային տնտեսության մակարդակի կրճատման ուղիները, ինչպես նաեւ ներկայացնել Հայաստանում նրա ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմների մի շարք առաջարկություններ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

1. Սահմանվում են «ստվերային տնտեսության էֆեկտների» վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները եւ առաջարկվում է գործարար միջավայրի վրա բացասական ազդեցությունը կարգավորող մոտեցում:
2. Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության ծավալները գնահատվում են Տանզիի մեթոդի կիրառմամբ, որը հիմնված է ազգային արժույթի պահանջարկի էկոնոմետրիկ մոդելի վրա: Հաշվարկվել է ազգային արժույթի ավելցուկային պահանջարկը, որը հաշվարկվում է որպես գնահատված դրամական պահանջարկի եւ զրոյական հարկերի դեպքում դրամական պահանջարկի միջեւ տարբերություն:
3. Հաշվարկվել է ստվերային տնտեսության հետևանքով պետական բյուջեի չստացված հարկային եկամուտների ծավալը: Կատարվել է Տանզիի եւ Գուտմանի մեթոդով ստացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը:
4. Բացահայտվում է ստվերային տնտեսության առաջացման վրա ազդող գործոնների համակարգը, ստվերային տնտեսության դեմ պայքարի նոր օրենսդրական եւ ինստիտուցիոնալ առաջարկներ են արվում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունը նվիրված է թեմայի արդիականության, ուսումնասիրության նպատակին և խնդիրներին, ներկայացված են գիտական նորույթը և եզրահանգումները, ինչպես նաև գործնական արդյունքները և առաջարկությունները:

Ատենախոսության առաջին՝ «Ստվերային տնտեսության կատեգորիայի տեսական մոտեցումներ» գլուխը կենտրոնանում է ստվերային տնտեսության դասակարգման վրա, վերլուծվում է այդ խնդրի վերաբերյալ գիտական գրականությունը, ինչը հանգեցրել է այն եզրակացության, որ այսօր չկա մեկ ամփոփ սահմանում՝«ստվերային տնտեսություն» հասկացության էության վերաբերյալ: Ըստ 1993 թ. ՄԱԿ-ի մշակված մեթոդաբանության, ստվերային տնտեսությունը ենթադրում է հետևյալ արտացոլումները.

ա) գաղտնի՝ գործունեություն, որը պաշտոնապես հաշվի չի առնվում, բայց օրենքով թույլատրված է ձևավորված ընթացակարգերի և կառույցների շրջանակներում,

բ) ոչ ֆորմալ՝ օրինականորեն թույլատրված գործողություններ, բայց դրանից դուրս ձևականացված հարաբերություններ և ընթացակարգերը,

գ) ապօրինի ՝օրենքով արգելված գործունեություն:

Այս գլխում հեղինակը դիտարկում է ստվերային հարաբերությունները նաև տնտեսական համակարգում վերափոխումների դրական գործոնի տեսանկյունից: Տնտեսական անկման, կենսամակարդակի նվազման ժամանակահատվածում ավանդական ոլորտների գործունեության մեջ ստվերային տնտեսությունը շուկայական նոր նիշերի ստեղծման կարևորագույն նշանակություն ունի, որն օգնում է ապահովել տնտեսվարող սուբյեկտների գոյատևումը: Զարգացող սոցիալական խնդիրները լուծելու համար որպես այլ գործոն կարելի է առանձնացնել նաև ոչ պետական ֆինանսական բազայի ձևավորման գործառույթը:

Ատենախոսության երկրորդ՝ «Եվրոպական երկրներում ստվերային տնտեսության հետ պայքարի փորձը» գլուխը, նվիրված է եվրոպական երկրների ստվերային տնտեսության ծավալներին, կրճատման մեթոդներին և հարկային դաշտի ուսումնասիրությանը: Ներկայացվել է եվրոպական երկրներում ստվերային տնտեսության հետ պայքարի գործիքակազմը, որն իր մեջ ներառում է ուղղակի և անուղղակի մեթոդներ: Այդ մեթոդների մեջ կարելի է առանձնացնել կանխիկի շրջանառության կրճատումը, էլեկտրոնային վճարումների ավելացումը, դրամական ավանդների խթանումը, հասարակության գիտակցության մեջ «խղճի խայթի» ձևավորումը: Ատենախոսության մեջ հետազոտվել է նաև ստվերային տնտեսությունը ազգային հաշիվների համակարգում: Հատկանշական է առանձնացնել Եվրոստատի կողմից մշակված «Աղյուսակական մոտեցում ՝ ամբողջական ծածկույթի ապահովման

համար», որն օգնում է համակարգված գնահատել ստվերային տնտեսության բոլոր հնարավոր աղբյուրները:

Ատենախոսության երրորդ՝ «Ստվերային տնտեսությունը ՀՀ-ում» գլխում հեղինակը ուսումնասիրում է ստվերային տնտեսության զարգացման պատճառները Հայաստանի Հանրապետությունում, մանրամասն ուսումնասիրելով հարկային բեռի ազդեցությունը, կոռումպացված գործելակերպերը, պետական ինստիտուների կայացման ազդեցությունը: Շեշտվում է նաև ստվերային տնտեսության ճիշտ հաշվարկման անհրաժեշտության պատճառները՝ տնտեսական քաղաքականության միջոցները կարող են սխալ կիրառվել և ունենալ չնախատեսված ազդեցություն, ստվերային տնտեսությունը կարող է նաև հանգեցնել գործազրկության և գնաճի վերագնահատման:

Ստվերային տնտեսության բացասական հետևանքները հետազոտելուց զատ հեղինակը նշել է նաև այն դրական դերը, որը նա խաղացել է հատկապես Հայաստանի տնտեսության կայացման վաղ փուլերում: Հաշվարկվել է ստվերային տնտեսության ծավալները երկու մակրոտնտեսական մեթոդների կիրառմամբ, իրականացվել է ստածված արդունքների համեմատական վերլուծություն, կատարվել են ստվերային տնտեսության ծավալների հաշվարկները ՀՀ-ում ըստ տարիների: Հաշվարկվել են պետական բյուջեի չստացված հարկերը ստվերային տնտեսության պատճառով 1994-2018թթ ժամանակահատվածում: Կառուցվել են էկոնոմետրիկ մոդելներ, որոնք դուրս բերեցին ՀՀ-ում ստվերային տնտեսության վրա հիմնական ազդեցություն ունեցող գործոնները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից կատարած հաշվարկների մեջ ընդգրկվեր նաև 2019 թվականը, մասնավորապես՝ 2019թ. Հարկային օրենսգրքում եկամտային հարկի օրենքի փոփոխության ազդեցությունը ստվերային տնտեսության ծավալների վրա:
2. Ստվերային տնտեսության գնահատումը կատարվում է մի քանի մեթոդներով՝ հիմքում ունենալով ֆինանսատնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ գործոններ: Աշխատանքը առավել ընդգրկուն կլիներ, եթե ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը իրականացվեր նաև հետանցումային տնտեսություն ունեցող երկրներում:
3. Ստվերային տնտեսությունը առաջացնում է սոցիալ-տնտեսական հետևանքներ, աղքատություն, գործազրկություն և հասարակության շրջանում սոցիալական

դժգոհություններ: Աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե աշխատանքում այս խնդիրներին ևս անդրադարձ կատարվեր:

4. ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների հաշվարկման առումով հեղինակի կողմից հետաքրքրական մոտեցում է ցույց տրվել, և ըստ այդմ, հաշվարկվել են ՀՀ ստվերային տնտեսության ծավալները Վ. Թանզիի կանխիկ փողի պահանջարկի մեթոդի համաձայն: Հաշվարկներում դիտարկվել են 1998-2018 թվականների տարեկան վիճակագրական տվյալները, սակայն, առավել ճշգրիտ արդյունք ստանալու համար ռեգրեսիոն մոդելը կարելի էր գնահատել 1998-2018 թվականների եռամսյակային վիճակագրական տվյալների հիման վրա:
5. Ստվերային տնտեսության մասշտաբների վերլուծության համատեքստում հեղինակը անդրադարձել է վերջինիս ազդեցությանը հարկային համակարգի և հարկային վարչարարության թերացումների վրա՝ անտեսելով սոցիալ-տնտեսական իրավիճակների ազդեցությունը որպես ստվերի առաջացման գործոն:
6. Աշխատանքում բերված եզրակացությունները ընդհանրական են, մինչդեռ դրանք պետք է բխեն խնդրի դրվածքից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն, այն ավարտուն հետազոտություն է, որտեղ առաջադրված հիմնախնդիրները, դրանց ուսումնասիրության մեթոդաբանությունը և իրականացված հետազոտությունները կատարված են պատշաճ մակարդակով:

Ատենախոսությունն ավարտուն գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրահանգումների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկություններն ու հանձնարարականները, ինչպես նաև ՀՀ ստվերային տնտեսության ծավալների գնահատման և կրճատման մեխանիզմները կարող են գործնականում կիրառվել գործադիր և օրենսդիր մարմինների կողմից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են վեց գիտական հրապարակումներում:

Էսթեր Հակոբյանի «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջների, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (19.06.2020թ., արձանագրություն թիվ 5):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող Տ.Փարսադանյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Բաղդասարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Տ.Փարսադանյանի և նույն ինստիտուտի գիտ.քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Բաղդասարյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. Վ.Լ.Հարությունյան
«19» հունիսի 2020թ.